ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

2016 թվականի մարտի 9-ին ժամը 15^{00} –ին Աղավնաձորի համայնքապետարանի դահլիճում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը:

Ներկա էին մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Հովսեփյանը , համայնքի ղեկավարի աշխատակազմը , համայնքի ավագանու անդամներ , համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներ և աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հաշվետվություն 2015 թվականին կատարված աշխատանքների և հետագա ծրագրերի մասին :

Սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները տարվա կտրվածքով ունի հետևյալ տեսքը՝

Մուտքային մաս 67014.4հազ.դրամ

Փաստացի 62285.9 հազ. դրամ

Հ/Հ	Եկամտատեսակները	հաշվ.հազ. դրամ	փաստացի հազ. դրամ	կատ.%
1	Հողի հարկ	6000.0	3706.4	61.7
2	Գույքահարկ	5331.0	4916.1	92.2
3	Տեղական տուրք՝	202.0	193.9	96.0
4	Վարձավճար	3000.0	2257.6	75.3
5	Տեղական վճարներ	5.0	0	0
6	Հողի օտարումից եկամուտներ	500.0	0	0
7	Տարեսկզբի ազատ մնացորդ	15107.3	15107.3	100
	որից՝			
	Վարչական բյուջեի	9206.1	9206.1	100
	Ֆոնդային բյուջեի	5901.2	5901.2	100
8	Դոտացիա,պետ. բյուջ. տրվ.այլ դոտացիա	34502.1	34502.1	100
9	Կապիտալ ծախսերի սուբվենցիա	2367.0	1602.5	67.7

Տարեկան բյուջեն սեփական եկամուտների մասով կատարվել է 73.6 % -ով:

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է թվով 5 ավագանու նիստեր, որտեղ կայացվել է 20 որոշում, ընդունվել է համայնքի ղեկավարի 59 որոշումներ, արձակվել ՝ 88 կարգադրություն:

Կատարվել է քաղաքացիների ամենօրյա ընդունելություն, ստացվել է 52 դիմում:

Առևտրի և ծառայությունների բնագավառներում հատկացվել է թույլտվություններ՝ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի համար :

Ապրիլի 23-ին կազմակերպվել է ջահերով երթ՝ նվիրված եղեռնի զոհերի հիշատակին:

Սուրբ Մարիամ եկեղեցու հարևանությամբ տեղադրվել է խաչքար նվիրված՝ մեծ եղեռնի 100ամյակին:

Ներկրվել և համայնքի բնակչությանն է տրամադրվել՝

70.0 տոննա ազոտական պարարտանյութ,

3110 լիտր դիզ.վառելիք

Համայնքի անապահով ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն 980.0 հազար դրամ:

Համայնքի մանկապարտեզի համար ֆոնդային բյուջեի միջոցներով ձեռք է բերվել 12 հատ մանկական զգեստապահարաններ 600.0հազար դրամ ընդհանուր արժողությամբ:

Ապահովվել է համայնքի մանկապարտեզի, արվեստի դպրոցի ,«Աղավնաձոր» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեությունը՝ ավագանու հաստատված աշխատակարգով , բյուջեից հատկացվել է

Արվեստի դպրոցին՝ 6692.4հազար դրամ , սեփական եկամուտները՝2093.8 հազար դրամ

Մանկապարտեզին՝ 10112.0 հազար դրամ, սեփական եկամուտները՝ 1722.0հազար դրամ

«Աղավնաձոր» ՀՈԱԿ-ին՝9240.2հազար դրամ,որից

ջրամակատարարում-6314.2 հազար դրամ,

աղբահանություն -800.0հազար դրամ,

կեղտաջրերի հեռացում -942.0 հազար դրամ ,

ճանապարհային տրանսպորտ -1184.0 հազար դրամ,

սեփական եկամուտները փաստացի կազմել են 3142.0հազար դրամ:

Շարունակվում է բարեկամությունը ֆրանսիական Տրեց քաղաքի հետ:Այդ համագործակցությունը դեռևս սկսվել է 2011թվականին և այն շարունակական բնույթ է կրում:2015թվականի հոկտեմբերին

ֆրանսիական պատվիրակությունը նորից այցելեց համայնք, եղան մանկապարտեզում, արվեստի դպրոցում :

Ենթակա կառույցների կատարած աշխատանքները՝ ամփոփ

«Աղավնաձոր» ՀՈԱԿ կատարած աշխատանքները

-Ձմռանը ձյունից մաքրվել է գյուղամիջյան ճանապարհները:

- Ապահովել է փողոցային լուսավորությունը:

-Սիստեմատիկ , ամիսը 3 անգամ , ըստ գրաֆիկի գյուղում կատարվել է աղբահանություն :

-Կատարվել է փողոցների գրունտի լիցք, բարեկարգվել է շուրջ 10 կմ ճանապարհ :

-Կատարվել էխմելու ջրի ներքին ցանցի և կոյուղու վթարավերականգնողական աշխատանքներ,ապահովել է համայնքում շուրջօրյա խմելու ջրի ջրամատակարարումը :

Աղավնաձորի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոց

սաների թիվը՝ 90

-Մարտ ամսին պարարվեստի բաժնի սաները մասնակցել են «Նազանք» հանրապետական պարային մրցույթ փառատոնին, արժանանալով առաջին կարգի մրցանակի:

- Կազմակերպվել է Եղեռնի 100-ամյակին նվիրված ցերեկույթ և կատարվել ծառատունկ դպրոցի բակում

- արվեստի դպրոցի սաները սեպտեմբերին մասնակցել են Եղեգնաձոր քաղաքում անկախության տոնին նվիրված համերգին

-հոկտեմբեր ամսին մասնակցել է Եղեգնաձոր քաղաքում ուսուցչի օրվան նվիրված տոնական համերգին , բերքի տոնին, մաքրամեի և գեղանկարչության բաժինները մասնակցել են Եղեգնաձորում կազմակերպած ցուցահանդեսին :

-Նոյեմբերի ամսին Երևանում կայացած «Մինորա» մշակութային կենտրոնում մրցույթ փառատոնին մասնակցել է պարի բաժինը՝ արժանանալով Բուլղարիայում կայանալիք միջազգային մրցույթին մասնակցելու իրավունք:

-«Լինա» մշակութային կենտրոնում կայացած մրցույթ փոռատոնին մասնակցել են պարարվեստի բաժնի սաները արժանանալով՝ «Գրան Պրի» հատուկ մրցանակի և «Հայ - վրացական բարեկամության» մրցույթ փառատոնին մասնակցելու իրավունք :

-Ժող.գործիքների բաժինը մասնակցել է լսումների Եղեգնձորի երաժշտական դպրոցում և նախարարության կողմից արժանացել է խրախուսման:

-Կազմակերպվել է տարեվերջյան հաշվետու համերգ և ցուցահանդես, մասնակցել են դաշնամուրի, պարի, դհոլի, քանոնի, գեղանկարչության, մաքրամեի բաժնի սաները:

Մանկապարտեզ ՀՈԱԿ

սաների թիվը՝ 64

Համայնքային ենթակայության մանկապարտեզում հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել միջոցառումներ նվիրված մայրիկների տոնին , Սուրբ Զատիկի տոնին, Հաղթանակի օրվան, երեխաների պաշտպանության օրվան, բերքի տոնին, կազմակերպվել են տարբեր տեսակի մրցույթներ, միջոցառումներ ինչպես նաև տարեվերջյան հաշվետու հանդեսներ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջնահերթ լուծում են պահանջում:

Տեղի ունեցան քննարկումներ մանկապարտեզում և արվեստի դպրոցում առկա խնդիրների,

«Աբանայի» ոռոգման ջրամբարի , խաղողի բերքի իրացման և չվճարված գումարների , չգազաֆիկացված թաղամասերի , մշակույթի տան վերանորոգման հետ կապված խնդիրների շուրջը :

Բարձրացվեցին համայնքին վերաբերվող բազմաթիվ հարցեր, որոնց համայնքի ղեկավարը տվեց պարզաբանումներ,ներկայացրեց տվյալ խնդիրների լուծման հնարավոր ուղիները:

Հաշվետվությունը ամփոփեց քաղաքաշինության բաժնի պետ Ա.Հովսեփյանը՝ առաջարկելով համայնքի ղեկավարի տարեկան գործունեությունը գնահատել բավարար :

Աշխատակազմի քարտուղար Ա.Գրիգորյան